ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 260-Ա «19» հունվարի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՆԵԼՍՈՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.71 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԻ ՍԵՅՐԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 39-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի 2026 թվականի հունվարի 7-ի N 532 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2026 թվականի հունվարի 15-ի հ. 02/09.2/1117-2026 գրությունը՝

1. Արմենուհի Գրիգորի Սեյրանյանին՝ 2026 թվականի հունվարի 21-ից նշանակել «Երևանի Նելսոն Ստեփանյանի անվան հ.71 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի հունվարի 21-ից մինչև 2031 թվականի հունվարի 21-ը ներառյալ:

2. «Երևանի Նելսոն Ստեփանյանի անվան հ.71 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Հասմիկ Չախալյանին ազատել նույն կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

3. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Подписано: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246